

# ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԳՅՈՒՄՈՒԲԸՆԻԵՐ<sup>1)</sup>)

Զ. ԶՐԱԴԱՑԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ.

Ըլրառն. — Վ., զրադացի տակի բարին կից մսուրի ձեռվ  
փոս է, որի մէջ թափւում է ազացած ալիւրը:

Ալրբոշ, — Վ., ալիւր բաշելու գործիք. երկայն կոթով  
թղաչափ կիսալուսնաձև տախտակ:

Գոռտինի կամ գոռտնիկ. — Վ., 2 բիլ երկ. և 4 մատ  
հաստ. տախտակ է, մինչև երկայնութեան կէսը բժա-  
շափ լայնութեամբ փորուած, ճեղքուածի պէս, որ անց  
են կացնում և հաստատում ջաղացի երկաթի ցցի մէջ,  
որպէս զի կունտը նստելով նորա վերայ՝ ցած չգնայ:

Դժխոցի քար. — Վ., զրադացի դժոխքի դրան վերայ դը-  
րուելիք սալը:

Դժոխքի դուռ. — Վ., զրադացի ջրան վերի դուռը, որ-  
տեղից վըաքի ծայրն իջած է ջրան մէջ:

Թուր. — Վ., զրադացի ոտաց թուր:

Թօզառն. — Վ., զրադացի վերի կողմի չորակ բարի ետև  
դատարկ տեղ, ուր ոտք չէ բանում, զրադացից բարձ-  
րացած և այս ու այն կողմ եկած ալիւրի փոշին աւ-  
լում են և լցնում այնտեղ, որը պատկանում է զրա-  
դացպանին:

Լաշ. — Վ., 2 բիլ երկայն 1 լայն 4 մատ հաստ տա-  
փարակ փայտ, որ գործ է ածւում զրադացի վերի  
բարը ցած բերելու համար:

Լուլայ. — Վ., զրադացի ջուրը բէչ եղած ժամանակ դը-  
նում են վաքի բերանի մէջ, որ ջուրը ժողով և ու-  
ժով հոսէ:

<sup>1)</sup> «Լումայ» 1898 գիրք Ա. և Բ.

Կառկին. — Վ., կանգնաչափ երկայն և մէկ ծայրը ծակ փայտ, որ ջրաղացի ցցի գլուխն անցնելով՝ շրջեցնում են ցիցը, որի հետ կառկինն էլ շրջելով ջրաղացպանը դիտում է թէ յիշեալ փայտը՝ ներբեկի քարի ո՞ր տեղն է դիպչում և ուր չէ դիպչում՝ ըստ այնմ ուղղում է փայտը, որպէս զի վերի քարը ցցի գլուխը անցկացրած միջոցին հաւասար քսուի ներբեկի քարին և հաւասար աղայ:

Կարմճակ. — Վ., 1. Թիզ երկայն 4 մատ լայն 2 մատ հաստ ջրաղացի երկաթէ ցցի վերայ անցող ձեռաչափ ծակ երկաթը, որի վրայ գրւում է ջրաղացի վերի քարը, որը շրջում է նորանով:

Կարմճակ. — Վ., ջրաղացի վերի քարի տակի երեսը մէջ տեղ կարմճակի ձևով փորուածք, որի մէջ մանում է կարմճակը:

Կունա. — Վ., ջրաղացի անիւի կունա, որի վրայ հաստատուած են փառեր:

Կրիճակ. — Վ., ուղոմի տակ հաստատուած ջրհորդանի ձևով փայտն է, որի մէջ իջնում է ուղոմի արտադրած արմբակը և սրա ծայրից սորում է աղօրիքի տակ չախչախկի շարժման միջոցաւ:

Մուճիկ. — Վ., ջրաղացի համար արմտեաց չափ է — 3 գրվագարունակող:

Շաղուլ. — Վ., ուղղահայեացութիւնը ստուգող պարան, որով գնելիս ուղղում են ջրաղացի երկաթէ ցիցն ու վարի քարը:

Ոտն. — Վ., ջրաղացի ոտը, 3 կանգուն երկ. 2 թիզ շըր. հաստ փայտ, որի ներբեկ ծայրը հաստատուած է տախտասուած փայտի վերի ծայրի ծակի մէջ, որի մէջ անց են կացնում թրածե փայտը՝ նորանով ջրաղացի ոտը պէտք եղած ժամանակ վերցնելու իջեցնելու համար:

Ուղոմ. — Վ., կնկղաձև սնդուկ, որի մէջ արմտիք են լըցնում աղալու, որի ներբեկ կախուած ծակ ծայրից արմտիք թափում է կրիճակի մէջ:

Չախչախկ. — Վ., 2 հատ թղաչափ փայտէ գործի, որի մէկ ծայրը ջրաղացի շրջող քարի վերայ, միսը կրիճակին դիպչելով դանդաղեցնում է նորան և այդ շարժումով

արմաիքը սորում է աղօրիբների ներքեւ։  
Զարչուվայ. — Վ. ջրաղացի ուղոմն իւր վրայ կրող փայ-  
տեսյ կազմուածքը։

Պնտղկայ. — Վ. 4 մատ բարձր մետաղէ գործի, որի վե-  
րայ դառնում է ջրաղացի երկաթէ ցցի ծայրը, որ զե-  
տեղում են տախտ ասուած փայտի մէջ։

Պօղազ. — Վ. ջրաղացի տակի քարի ծակը Խցող փայտը,  
որ արգելում է արմաիքի ջրտուն թափուելու։  
Զորակ կամ ջորիկ. — Վ.  $1\frac{1}{2}$  կանգուն բարձրի երեք կողմը, բացի  
ալլուան կողմը, որոնց գլխի վերայ հաստատում են  
ուղոմի չարչուէն։

Զրիսատ. — Վ. ջրաղացի վերայից ջուրը միւս կողմը դար-  
ձնելու աեղ։

Զրիստեմ. — Վ. ջրաղացի ջուրը կարել։

Զրտուն. — Վ. ջրաղացի անիւի պտոյտ անելու աեղը։

Սոր. — Վ. աղօրիքի ներքև կրիճակից՝ արմաիքի անընդ-  
հատ հոսելը։

Վարաս. — Վ. ջրտան վերև ծածկ-առաստաղ, որի վերայ  
հաստատում են վերի բարը։

Վըաք. — Վ. փայտէ կամ քարէ մեծ ջրհորդան, որի մի-  
ջից ջուրն իջնելով՝ պտառում է աղօ եքը։

Վըաքտէզ. — Վ. ջրհորդանի վերի գլուխ, շրջակայ ծա-  
ռաստան (թերեւս վըաքի պարտէզ)։

Ցախտ. — Վ. ջրտան մէջ պարկեցրած 3 կանգուն երկայն  
և 2 թիզ շրջ. հաստ փայտ. որի մէջ զետեղում են  
պնտղկայ գործիքը. այս փայտի մէկ ծայրին մէջ հաս-  
տառուած է ջրաղացի ոտը։

Փառ. — Վ. ջրաղացի անիւի վրայ հաստատուած ջրոր-  
դանի ձեռվ փայտեր, որոնց վերայ ջուր իջնելով՝ շրջ-  
ում է աղօրիքը։

### Է. ԶՈՒԼՀԱԿԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Թելացու. — Վ. հինածի մէջ գործածուելիք թել, որ փաթ-

թուած է մատնաչափ եղէգնի վերայ։

Լզկամ. — Վ. 2 լարանաչափ թել, որոնք տփայի 2 կտոր-

ները միացնում են իրար հետ փայտերի օգնութեամբ, որպէս զի նոցա միջից առնդրը չընկնի։  
Կղտաշ. — վ. Թղաշափ փայտի ծայրին կապուած կտաւ, որ թաթախելով ջրի մէջ թրջում են կտաւի գործութիք տեղը, որ աֆէն Խփած ժամանակ մըուքի պարզած թելերը լաւ հագցուին իրար վերայ։

Խաչուկ. — վ. Հինածի վերջին ծայրին կապուած 2 քիլ երկ. և մասնաչափ հաստ մի փայտ է, որի 2 ծայրերից կապում են 2 ճիւղ բաժանուած հինածի վերջին ծայրերը։

Խիաք. — վ. կտաւագործ։

Խինած. — վ. գործելու թելերը պրկած, պարզած և պատրաստած գործելու համար։

Խինեմ. — վ. Թելը պրկել գործելու համար։

Խինութել. — վ. ջուլհակը գործելն աւարտ հասցնելիս խինութելը անց է կացնում խինածի մէջ, որ կարողանոյ մմացածի մէջ մըուք ձգել։

Խորապարան. — վ. չուան կապուած գործարանի բաշուած հինածի վերջին ծայրին՝ հինածը գործարանի վերայ պիրկ պահելու համար. կտաւը գործելիս հետզհետէ թուլացնում են խորապարանը, հինածն առաջ բաշելու և գործելու։

Կոճակ. — վ. գործարանի վրայ բաշուած հինածի 4 մատ. երկ. բթաշափ հաստ փայտ, որից կապուած է խորապարանը։ Ճաղ. — վ. Հինած անելու ճաղ, որի վերայ 2—4 հատ հերունի պէս երկաթներ են ամրացնում և նոցա վերա, 2—4 թելով լի մասրա են անցնում և այդ թելերի բոլոր դուռի գլխաւոր ստիծին կապելով ճաղը շրջեցնում են հինած անելու։

Ճանճուռ. — վ. թռչունների փետառը կտոր, որով զարնում են մքուքի երկաթէ թելի դիմաց, որպէս զի թելացու մասրան դուրս չընկնի։

Մալըդ. — վ. 1<sup>1</sup>/<sub>2</sub> կանգուն երկ. և բազկի հաստութեամբ 2 փայտեր են գործարանի վերև և ներքև, որոնց վերայ հինածի բանալու գործողութիւնն է լինում. սոցա 2 գլխաւորների առանցքները 2 ցիցերի գլխի մէջ են դառնում։

**Մասրայ.** — Վ. մատնաչափի եզէգն, որի վերայ փաթթում են հինածի մէջ գործուելիք թելը:

**Մաւարայ.** — Վ. 1<sup>1/2</sup>. կանգուն երկ. և բազկի հաստ. փայտ է, ասփերի ետև հաստատուած, սորա վերայ անխառն կերպով պարզում են հինածի թելերը, որ ասփի մէջ մտնելիս իրար հետ չխառնուին:

**Մղկին.** — Վ. ջուլհակի մասրան լցնելու ձախարակի սոնակը:

**Մթիթ.** — Վ. քանոնաձեւ 2 փայտ՝ երկաթէ շարժական դակով իրար հետ միացած, որոնց ծայրերին ական ասեղ կայ. ջուլհակն այս մթեթի ծայրերը իւր ծած կտաւի բերանին է ոչմ' դնում որ կտաւը հաւասար լայնութեամբ գործուի:

**Մբուբ.** — Վ. կկոց կամ կկոցակ, հինածի մէջ գործուելի թելն այս ու այն կողմը տանող բերող գործին, որ թզաչափ երկ. և 2 բթ. հաստ. ունի. փորը մէկ մապի երկաթէ բաց է. բացուածքի միջնավայրում երկաթէ թել է տնկուած, որի վերայ անց են իւրաքանչւմ թելպալուի մասրան:

**Նազուբ.** — Վ., ձախարակ, որի վերայ մանած են փաթթառմ, կամ բանում ու կծկում. (տես վելակ, Զիթ. վեր. «Լումայ» 1898 թ.)

**Ոտտախտակ.** — Վ., 2 կտոր ոտնաչափի տախտակ, գործարանի փոսի մէջ ասփերից կտառուած, կտաւագործը մէկ ոտը մէկի, միւսը միւսի վերայ կոխելով բարձրացնում ցածրացնում է, որպէս զի մբուբը հինածի մէջ անցուդարձ անէ:

**Զլայ.** — Վ., վանի կտաւի լայնութեան չափ լիպը է. 80 թել մէկ չայ է. վանի կտաւները 8—12 չլայ են լինում. 8 չլայ կտաւ կանգունի 11—16-դ մասն է. 10 չլայ՝ 18—16 մասն է, իսկ 12 չայն 1 կանգուն:

**Պալշմայ.** — Վ., թզաչափ երկայն և մատնաչափի հաստ 2 փայտ, որ տփայի 2 կտորները միացնում է իրար:

**Պանիկ.** — Վ., 1 կանգուն երկ. և բազկի հաստ. փայտ, պարանով կախուած գործարանի առիբից ասփի վերայ կշռի պէս, որի 2 ծայրերից կախուած են ասփերը:

**Պարզպան.** — Վ. հինածը գործարանի վերայ առնելուց յեղարզ բանալ) տոյ 2 մալլ փայտերի վերայ տարածելը:

**Պուրաճաղ.** — Վ., 3 բիլ երկ. և բժժաչափի հաստ. փայտ է, լուսուց ը.

որով ջուլհակը պատեցնում է սրմինը, գործուած մասը կտաւի սրմի վերայ փաթթելու:

**Աջովայ. — Վ.**, 6 հատ կանգնաշափ երկ. և մատն. հաստ փայտեր, որոց երեքականը ասփ գործիքն են կազմում, թելերով իրարու հետ հինուած:

**Սանտր. — Վ.**, 2 հատ կանգնաշափ երկ. և մատն. հաստ փայտեր, սոցա երկուսի մէջ շարուած են ասղի հաստութեան եղեգի կտորներ խիտ առ խիտ, իրաբանչիւրի միջից հինածի մէկ մէկ թել անց կացրած:

**Ամոմայ. — Վ.**, վարոցաշափ փայտ է անցկացրած հինածն ասփերից երկուսի բաժանուածի մէջ տեղ. կարօճիկը կախուած է մաւարայից և այս փայտից, որոնք թելերը մաքուր պահելուն են ծառայում:

**Ստիծ. — Վ.** ջուլհակի շրջեցրած ձաղը, որով պրկում են թելերը: Ստիծ գլուխ. — Վ. ստիծների 2 գլխաւոր ստիծներ, որ հաստ են:

**Սրմին. — Վ.**, ջուլհակի առջևի փայտը, որի վերայ հետզհետէ փաթթում է գործած կտաւը. սորա 2 գլխների առանցքները պատում է 2 զցի գլխների վերայ և աջ ծայրը չորս կողմից ծակուած է, որոնց մէջ անց են կացնում պուռածաղ փայտը սրմին պատցնելու. սրմին մէկ երես ծայրէ ի ծայր փորուած է խազնայ անունով, որի մէջ պառկեցնում են խազնի փայտը և այս փայտի վերայ հաստատում են տահնան:

**Տահնայ. — Վ.**, գործուած կտաւի վերջին ծայրը, որ 1 բիլ երկ. անգործելի է մնում ասփ սանտրի մէջ, որի ծայրից պատուաստում են գործուելի հինածը:

**Տֆայ. — Վ.**, 1<sup>1</sup>/<sub>2</sub> կանգ. երկ. և բազկ. հաստ 2 փայտ, 4 մատ իրարից հեռու, իրանց ծայրերով իրար հետ հաստատուած 2 պալշմայ ասուած փայտերով և 2 լղկամ թելերով. այս 2 զուգահեռական կտորների մէջ հաստատուած է կտաւ գործելու սանտրը. ամեն անգամ մբուքը ձգելիս՝ ջուլհակը տփան բաշում է՝ մը բուքի պարզած թելերն իրար վերսոյ սեղմելու հագնելու համար:

**Փրկալ. — Վ.**, փրկալը բազկանում է 2 կաքաւ և 2 ճիւ փայտերից, 2 ճիւ փայտերի ծայրերը տփայի ծայրերին է մեխուած. միւս ծայրերը 2 կաքաւների գլխների

վերայ. 2 կաքաւներն էլ տնկուած են փրկալ փայտի ծայրերի վերայ. սոքա իրար միանալով տժան պահում են հաւասար բարձրութեամբ, երբ որ ջուշակը առաջ ու ետ է բաշում նորանտ Քարոճիկ.—վ., 2 նուկի ծանրութեամբ բար է, կախուած 2 մաւարայից և սմոմայ փայտերից:

ԶՈՒՂԱՑԵՑԻՈՑ ՀԱՅՐԵՆԻ ՊԱՐՁ ԼԵԶՈՒՆ ԱՅ, ԶՈՒ ԿՈՒ  
ՊԱՐԾԵՆԱՆ

Զուղալեցիք անք կու պարծենք.  
Մեք մեր լիզուն գրոց կարծենք.  
Ով գրափառք չնի խօսման՝  
Հըլդաքիկս կը քարգործենք:  
Հարվանըցիք միաբերան.  
Կասեն մեք անք լիզվի մէրան.  
Թափիխօր խացին՝ հաց ան տսում.  
Գիտեն թա մին լիզվի տէր ան:  
Դաշտըցիք զատ ճանանչման չեն.  
Խոր անումըն՝ հալը կու կանչեն.  
Ալծ ան ասում խաշվի թա էծ.  
Գրոց լիզուն լիմաման չեն:  
Ղափանըցիք լանցան սասում.  
Զուրէնք թողէլ՝ մեզ բամբասում.  
Մին զըլըմբօկ լիզու ունեն.  
Բակակին՝ բացթող ան ասում:  
Վանըցիքըն տիր անխել ան.  
Մեր գըրընին կասեն մելան.  
Մին օր մեր տան գոստ լիշեցինք,  
Առվան վերկացին դուսելան:  
Գազկըցիքն մին վուչ սար ան.  
Լիզուն լէնցա մըթին մարան.  
Մէն աւազան կտսեն ունենք.  
յանա թա մին աւիզարան:  
Ագուլըցիք քարկը դառեն.  
Բերան բանան մեզ բամբասեն.

Զըրի ղալանկակմէրին՝  
Բէղիաթ լիզվօվ ստիոր կասեն:  
Մեք շամբեցոց անք շատ խօվան.  
Գրափառքում տիր խամովան.  
Ասելէն տսմանամ կասեն.  
Մեզ պէս գրոց լիզվի ծովան:

ՎԵՍՆ ՎԱՐԴԱՆ ԺԱՄԱՆԱՔԻՆ,  
որ վասն իւր քնափ լինելոյն, եկեղեցոյ ործակն սպա-  
նեց, ասելով թէ ինչ բան ունես հետ օտար համերի:

Գրեմ քարտէս յոյժ ողբալի.  
Զբանս հակիրճ և զիւրալի.  
Սակըս չարեացն անպատմելի.  
Վարդան պղծոյն լամօթալի:  
Ժամկոչ է լայսմ ժամանակի.  
Զունի աստիճան որ գուռն փակի.  
Մեղք էր գործէ առանձնակի.  
Զքարոզն ասէ փութանակի:  
Ընդ աղքատաց սիրտն խեթ է.  
Բնաւ խելք չունի խսպառ շեթ է.  
Կատուն արեր է լուս եղբալը.  
Կասէ գոգիս մէջն ցեթէ:  
Տուէլ եղեր վարա վարա.  
Լուսահոգի տէր զաքարա.  
Որ ընդ ճառթին հացի համար.  
Գոռալը կանչէր մադաթ հարար:  
Գինւոյն եղեալ ես խոր դարան.  
Բաժկին ծածուկ կոխես մարան.  
Մէկ թաս գինւոյ համար կերդվես.  
Գիրկդ կառնուս աւետարան:  
Պոլըդ նման է ծուռ նետի.  
Զեռքդ և ոտքդ խուզկած փետի.  
Աչքդ ու բերանըդ է նման.  
Կատվի մկան և առնետի:  
Փորդ եղեալ է գինւոյ տուճ.

Սիրտդ տրտում մըուր մճում.

Աստառըն խաշար ես գործում.

Երեսդ սէվ մըուտ կճում:

Մէջքդ է տնտուղ որպէս սամար.

Ունքերդ է քանդված կամար.

Քաղցած և գող կատվի նման.

մեռէլ ես մէկ ձվի համար:

Ոտըդ եղտոտ չունիս մաշի.

Ով անտաշ փայտ կոպիտ նաշի.

Ղարաչու նման հաց կուզես.

Զկալ քո երեսին կաշի:

Դառըն բանջարն քեզ մօտ նուշէ.

Միթէ քո բերանն գուշէ.

Քօսանսս աղքատ չի տեսնես.

Գիտեմ որ քո աչքին փուշ է:

Տուէլ ես բանն աւերել.

Աղքատաց փայ ճաշըն կըրէլ.

Երեսիդ գոյն և միս չըկալ.

Ցիսուն տարէն փթած մեռէլ:

Ով գու քսու և վասվասէ.

Ահա ցորեանն նորահաս է.

Քանի կուլաս հացի համար.

Միթէ քո փորն կարաս է:

Մտիկ կանես ալլոց ձեռնի.

Թէ շալակս ով հաց կու բեռնի.

Գիշեր ցերեկ աղօթք կանես.

Թէ տէր Աստուած ով կու մեռնի:

Լսես թէ աղքատն ճաշըն կերաւ.

Կոիւ կուտաս ոտօք ձեռավ.

Քեզ մեծ աւետիք դիլաք.

Որ ավումին կինն մեռաւ:

Դու քանի մէկ աստառ չափես.

Կանալքն ամէն օր խաբես.

Հաց ուտելով չես կուշտանար.

Քանի լափես ճղվես ճաքես:

Քեզի էլ ով կուտալ սալամ.

առ ու ծախսում ալամ դալամ.

Ո՞վ փուչ դնդում և թսկած բողկ.

Անհամ շախկամ փթած քալամ:

Ո՞վ խաքերայ և խիստ սլիկ.

Աղքատաց հետ էր չես բիոլիկ.

Զքո ունքերն է խանձած.

Տղիդ աչքերըն է չոլիկ:

Ո՞վ լրբադէմ և յանդուգն.

Խեղդած աղլիկս տառեխ ձուկն.

Զըի շուն ես սատկած մուկն.

Պակաս չէ երեսիդ թուքըն:

Անշնորք ես որպէս բաղալ.

Չայնըդ կարած քաղցած չաղալ.

Քինթըդ սնտու բերանդ մաղալ.

Փոխէրնն կասես ամէն սղալ:

Ո՞ւր է քո փարաջէն փալաս:

Կխպած շլոր հոտած մալաս.

Կարդացողաց խօսք չես լսիլ.

Բան կուղարկեն կութոնթորաս:

Անպտուդ ծառ ես գարիվալր.

Չխմիսան բօշ գամ ու դիվար.

Քո գժութեան որ մինն ասեմ.

Ամէն կողմանց խեվ ու շիվար:

Ո՞վ գու անգութ որպէս լուդաս.

Ընդէր որձակին մահըն փութաս.

Յաւուր մեծ զատաստանին.

Հաւերին ի՞նչ ջուղար կուտաս:

Դառան մսի ես զօրաւոր.

Եւ փլաւի սպասաւոր.

Գլուխ որձակին ջախջախեցեր.

Որ էր հաւուցըն թագաւոր:

Որձակն արարեր ցիր և ցան.

Թէ բան ունես գու տար տան.

Ով եղկելի անմիտ դիլաք.

Մքթէ քեզ չունիս այնպէս բան:

Ո՞վ շեթ Վարդան անխելացին.

Յիմար իբրև զգերգեսացին.

Երբ խօրօզն զարկար գետին.

Ալրի հաւերն ամէն լացին:

Ո՞վ խստասիրտ որպէս գազան.

Ուր է որձակըն հրաշազան.

Վասն ալն տէրտէրների ձեռացն.

Կուտես չօմաղ և գաւազան:

Նման ես առիւծին մատակ.

Վալրի գալլոցն ես քատակ.

Երբ որձակի մահն կամեցար.

Քո տան հիմըն լինի լատակ.

Որձակն էր յոլժ փափուկ և գէր.

Նման նմին իսկի չկէր.

Երկու թևըն միմեանց շփէր:

Չայնն մարդոյ ականջ խփէր:

Ոչքն էր բոլոր որպէս կանթեղ.

Մէջ փորին կայը կէս լիտը եղ.

Հաւերն կուրան աղաղակեն.

Ի՞նչպէս կանես դու նոցա գեղ:

Մէջկն սպղալը որպէս կոկիչ.

Ժամն իմանալը և չէր խոտիչ.

Նա կատաղեալ լկտի հաւուցն.

Կեանք էր կենաց և սփոփիչ:

Որքան որձակն էր կենդանի.

Հաւերն կային ի խրախճանի.

Սլժմ մնացին որբ և ալրի.

Գիշեր ցերեկ երերմանի:

Երբ կու նայիմ հաւուցն երամ.

Սրտիկս խոց կելնի վէրամ.

Զէրա ալլվի ասող չկայ.

Թէ այ հաւեր ես ձեզ տէրամ:

Աւետարանիչն Ղուկաս.

Միշտ պատուիրէ որ արթուն կաս.

Տվեր որձակըն ըսպաներ.

Որ մինչև պինդ լուսըն խռկաս:

Որպէս վանից շեթն խիտիր.

Նման նմա բարուքդ չնթիր.

Դատաստանին լինելոց են.

Հաւերըն քեզ վրէժ խնդիր:

Փախիր և գիտ քեզի վաթան.  
 Ո՞վ դու տխմար տղէտ Վարդան.  
 Հաւերըն մանսար են շինած.  
 Որ գնան օրտուն արզալ կարդան:  
     Տէրըն Քրիստոս գալ ի յատեան.  
 Զմեղ ժողովել լըշտեմարան.  
 Մեծ դատաստան լինելոց է.  
 Նոգիդ մտնելոյ քաւարան:  
     Յալնժամ լինի անդ սուր և սով.  
 Դու մէջն անկեալ որպէս շիլ կով.  
 Աղաղակես գառըն գըթով.  
 Տեփեն զերեսդ կպրաձիթով:  
     Աչացդ կուտան կարմիր շամփուր.  
 Բերանդ կածեն արմիճ և հուր.  
 Փորդ ծակվի ողբաս անդուր.  
 Չալն ելանէ որպէս սանթուր:  
     Անլիշաշար տէր ողորմած.  
 Աղաշանօք երկնաւորաց  
 Թող ըղյանցանըս մեր մեղաց.  
 Իմ, Վարդանին, և լսողաց:  
     Դուք ներեցէք եղբարք բարի,  
 Համարձակեալ եմ լոլժ կարի.  
 Ինձ ողորմեա տէր իմ Յիսուս.  
 Յովնաթանիս երգող բանի:      1162.  
     Խ. տունն է

### ԳՈՎԱՍՍԱՆՔ ԳՈՒՐՁՍՑԱՆԱՅ

Գովեմ սրտիւ ուրախական.  
 Թիֆլիզ քաղաքըն պատուական.  
 Խիստ գեղեցիկ են սիրական.  
 Գուրջստանալ գոզալներըն:  
     Ինքնագոյ ջերմեռանդ համամ.  
 Միջի խաթուններըն թամամ.  
 Սիպտակ բուխաղ բոլոր շամամ.  
 Վըաց տան արմաղաններըն:

Կարմիր երես նման վարդի.  
Խնչպէս ծաղիկ ծաղկազարդի.

Ուշ ու խելք կու տանեն մարդի.  
Գուրջստանալ գողալներըն:

Ղալամ ունքեր կապած կամար.  
Աչքերըն վառ շամսի ղամար.  
Կապէլ են մուրասայ քեամար.  
Վրաց տան արմաղաններըն:

Վարսերն գաստայ ոլորած.  
Երեսըն երեսին լուսին բոլորած.  
Շատ մարդ է տեսած մոլորած.  
Գուրջստանալ գողալներըն:

Տեսօք են ամէն հասարակ.  
Պօյն ու ջամալն է մուբարաք.  
Բաղանն լայն մէջքն բարակ.  
Վրաց տան արմաղաններըն:

Զօրեղ ազգ է պարթևական.  
Զարմ և ժառանգ ազնուական.  
Արժանի թագաւորական.  
Գուրջստանալ գողալներըն:

Մէջլիս նստեն սազով դամով.  
Լեզուն քաղցր խօսքն համով.  
Գինի խմեն ոսկի ջամով.  
Վրաց տան արմաղաններըն:

Սիրամարդի նման քալլին.  
Աստղանման գունով փալլին.  
Տեսողքն զարմանան մալլին.  
Գուրջստանալ գողալներըն:

Հաքէլ են դումաշ ու խառալ.  
Ունին շտո ղարաւաշ ծառալ.  
Խիստ են կանաչ թազալ թառալ.  
Վրաց տան արմաղաններըն:

Ատլաս են հաքէլ հաւասար.  
Սամուր վալափուշ սարասար.  
Ամէն պարոն են հաւասար.  
Գուրջստանալ գողալներըն:

Ես նաղաշ եմ մեղաց ծով եմ.  
 Նոցա սիրովըն գինով եմ.  
 Խաբար չեմ թէ ինչպէս գովեմ.  
 Վրաց տան արմաղաններըն։<sup>1)</sup>

## ԱՂՔԱՑԱՑ ԿԵՐԱԿՐՈՅՆ ՀԱՄԱՐ

Եղբարք ձեզի բան մի ասեմ,  
 Որ լսողներն զարմանան պատմեմ,  
 Աղքատ հարուստ ծեր ու տղան  
 Այենեքեան թող իմանան։  
 Ո՛չջերնիս սահմանք մի մըտէր,  
 Կէօլեա աղքատաց են դատեր,  
 Վալն եկեր աղքատն է պատէր,  
 Որ զոր տեղն զուր բերան կառնէն։  
 Աստուածածինը մօտ օրերը,  
 Կելլան եկեղեցպաննէրն,  
 Կիւնին չարշինու խաները,  
 Ո՛ատաղի համար շուրջ կուգան։  
 Ճամերը ծանուցում կընէն,  
 Աղքատաց անունը կըհանէն,  
 Խեղճ ժողովուրդն ալ ինչ ընէն,

1) Այս երեք ժողովրդական բանաստեղծութիւնները մենք հանել ենք մի գոչադրից, որ գտնուում է արժ. Հ. Ցովհաննէս աքահ. Մկրեանի մօտ: Այդ գոչադրի մէջ գտնուում են.

ա. Տոսմար Ազաշիայի, և պարզաբանմար ի վերայ Ազարիայի ամսոցն կարգեալ. և տաղը և ստանաւորը և այլ բանը և իմաստը տոմարականը, հոգեւորականը եւ պատմութենականը: Հաւաքեալ ի բազում տեղեաց. աշխատութեամբ ապրնկալ Պետրոսի դպրի եւ բարտուղարի: Յամի Տեառն 1754 նոյեմ. 23 ի հայրապետութեան Տ. Աղէքսանդրի ընդհանուր չայց ո. կաթող. ի Բանկալս:

բ. Համառօտ պատմութիւն ո. Գրիգորի լուսաւորչի.—ի ստոյդ պատմադրաց հնոց եւ նորոց:

գ. Համառօտ պատմութիւն յաղագո արտասահման առնելոյն եւ քշելոյն մեծ Շահաբաս արքայի պարսից զամենափարթամբ երկիրն հայսաստանեայց, և բնակեցուցանելոյն յԱսպահան քաղաքի:

Այս ժողովածուի սկզբում եւ վերջում կան ժողովրդական բանաստեղծութիւննեո, ոի Ստեփանէ դաշտեցւոյն: կամ „Դաշտ տեցի Փանոսն“:

Աղքատաց է տէի կուտան:

Խան չեն թողուր չարշը պազար,

Էսնավնէրն կնէն պէզար,

Խուռուշ կը ժողովեն հազար,

Չի մնար մէխանէ ու խան:

Կը բերեն հինգ եզ կառնէն,

Հախ կուտան աշճը կը բըռնէն,

Մեղքն ու վարձքն իրար խառնէն,

Տես թէ գէր տեղերն ուր երթար,

Խազանները խուռմէշ չըրած,

Առաջ պարխաճները բերած,

Չեր պարխաճին անկն անիծած,

Դարձէրէն անօթի գազանաց:

Աս տարին տեսաք մէկ քանին,

Հարամ չունօղ ամիրանին,

Մէկ մեծ պարխաճով կտանին,

Որ տեսօղնէր չընէր կիւման:

Ենկիւրցի հաճի սընանը,

Սօֆճու ցէն պաշ պազիրկեանը,

Մեծ պարխաճ մը բերէր տանը,

Փէշին ներգնը շատ մարդ տեսան:

Դիտուն նիկողոս գպիրնիս,

Հէմ իշկէմպէ տարաւ հէմ միս,

Ոտք ու գլուխն ալ մեծերնիս,

Աղքատ ուտելու չի արժան:

Անոր կէօրէ մտմտացէք,

Ղուսուր մնացածն իմացէք,

Ժողովուրդ դուք ձեզ խղճացէք,

Աստուած ըլլայ ձեզ օգնական:

Աղքատները տահա չըգընաց,

Խազանները միս տահա չըմընաց,

Ոտքը իշկէմպէները գլուխը գնաց,

Նալեցէք կաշին ալ չի գողնան:

Իրիկիւնը դուռը ափ կառնէն,

Պարխաճնին գաղտուկ կրոնեն,

Հէմ կը չալէն հէմ կխառնէն,

Կրոցնին դուան հալ քան:

Եասսաքնը թող չի քնանա.  
 Որ գալօղն երթողն իմանա,  
 Աղքատ որ գալ դուռ չի բանա,  
 Վայն եկիր աղքատին վըրան:  
 Կէս գիշերուն գաղանները,  
 Միս չեն թողուր խաղանները,  
 Քիւքլիւ պէօյիւք իշխանները,  
 Եկեղեցպանները ինչ վայ տան:  
 Իշխանները պօշ չեն դատէր,  
 Միսը հումը քէնէ հատէր,  
 Տէրտէրները անկուշան է պատէր,  
 Թող կրէն պէլքիմ կշտանան:  
 Զէ թէ անոնց ալ հաւասար,  
 Եաղլը կտօր կուտան թէ տար,  
 Աղքատ տէրտէրներուն նաչար,  
 Անշահ տեղուն կտօր մի բան:  
 Ժամկոցները մտաց չի հանէք,  
 Եանլը տեղ պարխաճ չի տանէք,  
 Զէնէ սօնրա զարար կընէք  
 Կհանեն ձեղ ժամկոցութիւն:  
 Երբոր մատալը կը խաշէն,  
 Միսը կառնեն եղը կը քաշէն,  
 Աղքատաց սիրտը կը մաշէն,  
 Թէ սապը ըռէք ժամէն ելլան:  
 Խեղճերու ժամուն կունալէն,  
 Իրէք չորս մարդ կըլլան դալէն,  
 Բաժնելու աղքատաց բալէն,  
 Ոսկորը ետ ճիկէր լոք ման:  
 Աղքանները անով կը խարեն,  
 Խեղճերու սիրտը կը լարեն,  
 Անջուր ջրով բիլաւ կերեն,  
 Բանին խօլայըն նոր գըտան:  
 Մեկ իշխանը բերնովն ասաց,  
 Թէ բիլավներն անջուր մնաց,  
 Թէքրար պազդալին մարդ գնաց,  
 Որ հինգ վեց օխայ ետ առած:  
 Զենկինը պարխաճով տարաւ,

Աղքատ կար որ իսկի չարաւ,  
Կուրին մէկն ալ քէօթէկ կերաւ,  
Միս կուզես տէի բարկացան:

Խաբուճի խաչուն ծռվեցաւ,  
Հաճի Մովսէսին հետը ո, ոռուեցաւ,

Հալքը մէկ զմեկու խառնուեցաւ,  
Արիւն մի պիտի ըլլար օր թան:

Ալս բան յառաջ եղեր բարի,  
Սօնրաին դարձուցին չարի,

Որ խախք կըլլան ամէն տարի:  
Թէ քէահիա թէ եկեղեցպան:

Հոս իշխանները սուչ չունին,  
Հազ չեն ըներ աս բանին.

Եաքա կը պատուն կքանին,  
Հանդիպօղներն եղերին փիւշման:

Անճագ մէկմնէ եղերէ ատէթ,  
Անոնք ալ կըսէն նէ հա ճաթ,

Մեզի թող չըլլա պէտիաթ,  
Զիւնքի յառաջ եղերէ սահման:

Ամէն գալողը ասանկ կըսէն,  
Աս բանները քըքէ դուրս էն,

Դիտցող մարդիկն ալ ինչ ըսէն,  
Շիտակ խօսին աչից կելլան:

Թող թողուն զմեզ մեր հալը,  
Զի կողոպտին հալքին մալը,

Պէտքը չէ իրէնց ժողովել տալը,  
Մեք խալըլէնք ժողովրդեան:

Տանօղներն ալ ինչ նախատինք,  
Պէտք որ առաջ խրատէք,

Վարձք է տէի կըսեն կուտէնք,  
Չէն գիտէր այնպէս կիմանան:

Հալը վարդապետն ալ ինչ գիտէր,  
Տանօղ զէնկինները դատէր,

Որ յաւուր յառաջ խրատէր,  
Անուշ խրատով զանազան:

Լսէր մարդիկ ինչ կու դատէք,  
Մեծատուն էք թէ աղքատ էք,

Աղքատաց հախը ինչու կուտէք,  
 Զէք լսէք գիրք աւետարան,  
     Դուք տներդ ալ ասանկ կընէք,  
 Մատաղը անունը կու հանէք,  
 Մէկ զմէկու տուն կու տանէք.  
 Ուտէք խմէք ազգ ազգական,  
     Իրաւին այդպէս իմանաս,  
 Ժողովրդեան միտքը բանաս,  
 Աղքատներն ալ չը մոռանաս,  
 Հօրդ հոգւոյն հալը սրբազան:  
     Ինչ որ ինէ փէլտահ ըռինք,  
 Քանի մէկ խօսք մէկ տեղ բերինք,  
 Շատ բան կալ մէջը չի դրինք,  
 Աս հերէք է մեզի տեստան:  
     Ես աս տեստանս կը կարդամ,  
 Գիտնամ թէ քիւրէ կը կերթամ,  
 Ես աղքատ եմ եօլսա փարթամ,  
 Որ սալթ բիլավ առանց հաց տան:  
     Րախի էն գինէին անցանք,  
 Միսը գնաց հացն ալ մոռցանք,  
 Քիչ մի բիլավ առինք դարցանք,  
 Անանկ տալուն հիչ թող չիտան:  
     Արթըք պօշ թողունք աս բանը,  
 Քաշենք կը կտրէ չուանը,  
 Հէլպէթ տէրն գայ տիւանը,  
 Կտեսնալ շիտակ դատաստան:  
     Դու ամէն օր շիտակ դատէ,  
 Հէլալ ու հարամը զատէ,  
 Ասոնց պիւթիւնը Աստուած գիտէ,  
 Շատ չի խառնենք եախան թող տանք:  
     Ճէրեան օղլու աս երբ ըրիր,  
 Այսքան բաներ մէլտան բերիր,  
 Թուին հազար երկու հարիւր,  
 Քսանւերիքն էր թուական:

---

Այս հետաքրքիր ռատանաւորը հանել ենք մեր մատենադարձնի սիամականոր նղեալ բանքն որ այստեղը գրեալ են՝  
 վերնադրով գրչագրից, որ արտադրուած է 1815 թուին: ԽՄԲ: